բութիւնն եղերգ ի ձեռաց այլազգեացն ընդ նոսին և ի թվոյս ՌՃՀԵ (=1726) ազատեաց զսուրբ աւետարանս զայս օգնութեամբ ստամպոլու Պալաթեցի մէի. Դասպարին իբրու յիշատակ իւրն և կենակցւոյն իւրում մէի. Նուրիին և աստուածապատ դստերացն մահտեսի Մարիամին Հոիփսիմէին և նախնեացն իւրեանց և ետ զսա ի Տաճար Սրբոյ Յարութեանն Քրիստոսի.» (Խաչ. Յուց. տետր. Ե. էջ 315—16)։

ԳԱՍՊԱՐ ՎՐԴ. ՄԵՐՏԻՆՅԻ.— Մբ. ՏԲ. 1655ին ՏՅ. 1660ին։

ԳԱՍՊԱՐ ՎՐԴ. ՁՆԲՈՒՇԵՑԻ.— Մբ. Ս. Աստուածածնի վանքին Ձնքուշ Զռ. Ձնքուշի մէջ 1737ին. ուխտաւորութեամբ կ'այցելէ Ս. Յակոբի վանքը, 1749ին, առ. Ձնքուշի 1756ին; կը ձեռնադրուի եպս. 1764ին, կը վախճանի 1788ին, (Թորոս Աղբար Բ. էջ 400 և 466)։

ԳԱՐԵԳԻՆ ԵՊՍ. ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ, ՊՈԼՍԵՑԻ.— Մբ. Արտաչի Դպրեվանքին, Ծ. Տրապիզոն 1880ին նախ աշակերտած է 1896ին Վենետիկ Մուրատ Ռափայէլեան վարժարանին, յետոյ չրջանաւարտ Դպրեվանքին. Զռ. 1901ին. կրթական, քարոզչական և առաջնորդական պաշտօններ վարած է Արմաչ (1901-2), Սիս (1906), Մարաշ (1907), Արաբկիր, Գոնիա, Տրապիզոն, Պաղտատ և Պոլիս. ուխտաւորութեամբ այցելած է Մուշ (1911)։ 1915ին ընդհանուր պատերազմին, կը տարագրուի Ս. Յակոբի վանքը, ուր կ'ստանձնէ Ժառ. Վարժ.ի մէջ ուսուցչական պաշտօն մը (1916-17). կ'ընտրուի սինոդական. 1918ին, Սահակ կթղի. և ուրիշներու հետ Երուսաղէմէն կը տարուի Դամասկոս. զինադադարին Ս. Յակոբ կ'այցելէ և կը մեկնի Կ. Պոլիս. ժամանակ մը կը վարէ Տրապիզոնի առաջնորդութիւնը. կը ձեռնադրուի եպս. 1922ին Էջմիածին. դարձեալ Կ. Պոլիս, 1924ին կրկին կ'այցելէ Ս. Յակոբի վանքը և կը մեկնի իբր առ. տեղապահ Պաղտատի 1925ին։ Ամենապատ կեդր. Վարչութեան կը-րօն. Ժողովոյ 1927ին. առ. Գալիփոռնիոյ 1928ին։ Հրատարակած է Շողակաթումներ (տպ. Պոլիս 1925) և Նարեկ աղօթագրքին աշխարհաբար թարգմանութիւնը (տպ. Պոլիս 1926)։ Ունի նաև զանազան անտիպ երկասիրութիւններ։

ԳԱՐԵԳԻՆ ՎՐԴ. ՄԱՆՍՈՒՐԵԱՆ ԴԱՄԱՍԿԱՑԻ, Մբ.—Զռ. 1913ին, բարձրան 1915ին, կը վախճանի 1918 յուլիս 12։